ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2023թ. հունվարի երկրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հունվարի 11-13-ին շրջանների զգալի մասում դիտվել են թույլ տեղումներ, տեղումները դիտվել են ձյան տեսքով: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ստեփանակերտում՝ 0.3մմ, Ասկերանում և Մարտունիում՝ 4մմ, Մարտակերտում՝ 2մմ: Հունվարի 11-13-ին ձյան ծածկը կազմել է Ստեփանակերտում՝ 2-5սմ, Ասկերանում՝ 1-3սմ, Մարտունիում՝ 1-8սմ, Մարտակերտում՝ 1-3սմ:

Հանրապետության տարածքում 2-3 օր դիտվել է մառախուղ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է -0.8^{0}C, նորմայից ցածր 0.2^{0}C-ով, Ասկերանում՝ -0.2^{0}C, Մարտունիում՝ +0.2^{0}C նորմայից ցածր 0.7^{0}C-ով և Մարտակերտում՝ +1.7^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 19-ին՝ +7...+10^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 13-15-ին՝ -4... -5^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -2....-3^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև +7...+13^{0}C:

Հունվարի առաջին տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-2 մ/վրկ, պոռթկումները մինչև 7-9 մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 79-84%: